«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱ՝ Ուսուցման անհատական և տարբերակված մոտեցումները տարրական, հիմնական և ավագ դպրոցում

ԱՌԱՐԿԱՆ՝ Ֆիզիկա

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ Սուսաննա Եփրեմյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ «ՀՀ Արարատի մարզի Խաչփարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հետազոտվող նյութի հիմնական հարցը, խնդիրը ----------3
2. Ներածություն -- ----------4
3. Հետազոտական համատեքստ----------6
4. Հետազոտական ընթացք----------11
5. Գործնական համատեքստ----------12
6. Տվյալների մշակում և վերլուծություն----------13
7. Եզրակացություն----------15
8. Գրականություն----------16

Հետազոտվող թեմայի հիմնական հարցը .

Ինչո՞ւ է ուսուցման անհատական և տարբերակված մոտեցումները կարևոր կիրառել տարրական , հիմնական և ավագ դպրոցում

Հետազոտման խնդիրը

Գրագետ և ճիշտ մոտեցման, մեթոդական աշխատանքների միջոցով ստեղծել նպաստավոր պայմաններ տարբերակված և անհատական ուսուցման գործընթացը ապահովելու համար

Հետազոտման նպատակը

Տարբերակված և անհատական ուսուցման նպատակն է ընդհանուր կրթության բովանդակության յուրացման գործընթացում յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել պայմաններ՝ նրա ընդունակությունների, հետաքրքրությունների, ճանաչողական պահանջմունքների բավարարման զարգացման համար,դիտարկել տարբեր տարբերակված առաջադրանքների ազդեցությունը սովորողների մտավոր գործունեության ձևավորման վրա։

Ներածություն

Մարդիկ տարբեր են, դա բնական է, և այդ տարբերությունն էլ ցանկացած հասարակություն դարձնում է ավելի հարուստ, և, հետևաբար, այն պետք է իր արտացոլումը գտնի նաև դպրոցում; Դպրոցները պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը՝օգտագործելով տարբեր մոտեցումներ, այդ թվում՝ անհատական և տարբերակված:

Անհատական մոտեցման սկզբունքի էությունը կրթական գործընթացում ուսանողների անհատական բնութագրերը հաշվի առնելն է, որպեսզի ակտիվորեն կառավարեն նրանց մտավոր և ֆիզիկական կարողությունների զարգացումը: Անհատական մոտեցումը ներառում է ուսանողների համակողմանի ուսումնասիրություն և մանկավարժական ազդեցության համապատասխան միջոցառումների մշակում՝ հաշվի առնելով բացահայտված հատկանիշները: Անհատական մոտեցումը կարևոր հոգեբանական և մանկավարժական սկզբունք է, որը հաշվի է առնում յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկությունները:

Տարբերակված ուսուցման նպատակն է ընդհանուր կրթության բովանդակության յուրացման գործընթացում յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել պայմաններ՝ նրա ընդունակությունների, հետաքրքրությունների, ճանաչողական պահանջմունքների բավարարման զարգացման համար: Տարբերակված ուսուցումը թույլ է տալիս ուսումնական պրոցեսը կազմակերպել՝ հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները: Այն ապահովում է բոլոր աշակերտների կողմից կրթության բովանդակության յուրացումը: Այդ տիպի կրթության կազմակերպման դեպքում սովորողների յուրաքանչյուր խումբ, որոնք ունեն նման անհատական առանձնահատկություններ, գնում են իրենց ճանապարհով: Տարբերակումը բնորոշվում է սովորողների այնպիսի խմբերի ստեղծումով, որտեղ գործունեության նպատակը, բովանդակությունը, մեթոդները, ձևերն ու արդյունքները տարբերվում են:Տարբերակված ուսումնառությունը միևնույն բովանդակությունը մատուցելիս տարբեր ռազմավարությունների և բազմաստիճան առաջադրանքների կիրառումն է՝ հաշվի առնելով յուրաքանչյուր աշակերտի կարողությունների մակարդակը: Տարբերակված ուսուցման գործունեության մեջ բոլոր սովորողները աշխատում են նույն գործունեության վրա, բայց գործողությունը տարբերվում է՝կախված ունակության մակարդակից: Տարբերակված ուսուցումը հնարավորություն է տալիս աշակերտին որոշել, թե ուսումնական նյութի յուրացումը ո՞ր մակարդակում կարող է յուրացնել: Սակայն անհրաժեշտ պայման է, որ այն չպետք է ցածր լինի պարտադիր նվազագույն մակարդակից, և ուսուցիչը ուսումնական նյութը պետք է ներկայացնի առավելագույն մակարդակով: Եթե մի աշակերտ ցանկանում է առարկան ուսումնասիրել նվազագույն մակարդակով, իսկ մյուսն՝ առավելագույն,

ապա այդ հնարավորությունը նա պետք է ստանա: Այսպիսով, տարբերակումը հաշվի է առնում ոչ միայն աշակերտների ինտելեկտուալ ընդունակությունները, այլև հետաքրքրությունները: Տարբերակված մոտեցումը անհրաժեշտ է դառնում ոչ միայն թույլ սովորողների առաջադիմությունը բարձրացնելու, այլև ուժեղ աշակերտներին զարգացնելու նպատակով:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Ուսուցչի գերակա նպատակներից է աշակերտների առավելագույն ներգրավ-վածության ապահովումը դասապրոցեսին: Ներգրավվածության բարձրացումը ուսուցիչներից պահանջում է դասի ընթացքում տարբեր մեթոդների, ռազմա-վարությունների կիրառում: Այդպիսի մեթոդներից է անհատական և տարբերակման մոտեցումները, որն ըստ բազմաթիվ հետազոտողների հանդիսանում է արդյունավետ դասավանդման կարևորագույն բաղադրիչներից մեկը: Տարբերակումը կիրառելի է դառնում այն պատճառով, որ դասարանում առկա աշակերտները նույնը չեն իրենց կարողութ-յուններով և գիտելիքներով: Տարբերակված ուսումնառությունը միևնույն բովան-դակությունը մատուցելիս տարբեր ռազմավարությունների և բազմաստիճան առաջադրանքների կիրառումն է՝ հաշվի առնելով յուրաքանչյուր աշակերտի կարողությունների մակարդակը: Տարբերակումն ուսուցչից պահանջում է մշտական պատրաստվածություն, ծրագրավորված քայլեր և քրտնաջան աշխատանք: Ինչպես նշել է հոդվածագրերից մեկը, անհատական տարբերություններին արձագանքելն ըստ երևույթին, ուսուցչական դերի ամենաբարդ ոլորտներից է և լուրջ վերաբերմունքի պարագայում մարտահրավերների տեղիք է տալու ողջ կարիերայի ընթացքում (Brooks, V and Bills, 2012): Տարբերակումը ստիպում է ուսուցչին ուսումնական ծրագրի կատարողականի մասին մտածելուց իր մտածողությունը տեղափոխել սովորողների անհատական կրթական կարիքները բավարարելուն: Տարբերակված ուսուցումն իրա-կանացվում է 3 հիմնական փուլերով.

1. ճանաչել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները, կարողությունները
2. խմբավորել սովորողներին ըստ իրենց անհատական առանձնահատկությունների և հետաքրքրությունների շրջանակի
3. տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընթացը,ըստ՝ ուսումնառության ոճի.:

Տարբերակման գաղափարը նոր չէ կրթության ոլորտում: Այն կիրառվում է այն պատճառով, որ աշակերտները տարբեր են և ունեն տարբեր կրթական կարիքներ:

Յուրաքանչյուր դասարանում սովորում են աշակերտներ, որոնք տարբեր են իրենց զարգացվածության մակարդակով, գիտելիքներով, առարկայի նկատմամբ ունեցած վերաբերմունքով: Նրանք տարբեր հարթություններում են նաև այն պատճառով, որ նախկինում հաճախել են տարբեր դպրոցներ, կամ նույն առարկան սովորել են տարբեր դասարաններում, ունեն մտածողության տարբեր ձևեր, հոգեբանական և մշակութային տարբերություններ: Շնորհիվ տարբերակման, յուրաքանչյուր սովորող պետք է հնարավորություն ստանա առաջադիմել իր ներուժի չափով: Այդ գործընթացում կարևոր է այն, թե ինչքանով է ուսուցիչը ծանոթ աշակերտների գիտելիքներին, նրանց անձնային հատկանիշներին, ուսումնառության մեջ առկա դժվարություններին և ուսումնառության ոճերին: Ուսուցիչը պետք է բացահայտի աշակերտի ուսումնառության ընթացքում դրսևորվող հետաքրքրությունները և դրանք հօգուտ աշակերտի օգտագործելու եղանակները: Տարբերակված ուսուցման արդյունավետությունը մեծապես կախված է ձևավորող գնահատումից, որն ուսուցչին հնարավորություն է ընձեռում հասկանալու, թե ուսումնառության որ մակարդակում է գտնվում աշակերտը և գործողությունների ինչպիսի ռազմավարություն կամ օժանդակություն է անհրաժեշտ այն բարելավելու համար: Այդ պատճառով տարբերակումը և գնահատումը փոխկապակցված գործընթացներ են (Brooks, V and Bills, 2012): Տարբերակումը սովորողին պետք է հնարավորություն ընձեռի բարձրացնել ներգրավվածությունը և դասի ավարտին գրանցել առաջընթաց: Այն ենթադրում է աշակերտների տրոհում խմբերի, ընդ որում նույն խմբում աշակերտներին պետք է միավորի ունեցած գիտելիքի, կարողությունների նմանությունը: Խմբերի միջև եղած տարբերությունները պետք է իմաստավորված լինեն կրթական տեսանկյունից: Ուսուցիչը պետք է հստակեցնի յուրաքանչյուր խմբի կրթական կարիքները և պատասխանատու է բոլոր խմբերին տարբերակված դասավանդում ապահովելու համար, ընդ որում բոլոր խմբերին ներկայացվում են նույն նպատակները, որոնք դրված են ամբողջ դասարանի առջև: Այստեղ ուսուցչի համար առաջնային է պլանավորել ոչ թե ինչ սովորեցնել, այլ ինչպես սովորեցնելը՝ ուշադրությունը դասավանդելուց տեղափոխելով դեպի ուսումնառություն: Կանոններից մեկը, որը պետք է գործի, դա այսպես ասած 80- 20 կանոնն է: Հիմնականում, երբ կատարվում էր առաջադրանքով տարբերակում՝հին ձևով՝,

ուսուցիչը կատարում էր աշխատանքի 80 % -ը, իսկ աշակերտները 20%-ը: Պետք է փնտրել ուղիներ, որոնց դեպքում աշակերտները կկարողանան ինքնուրույն կատարել առաջադրանքի առնվազն 80 % -ը , իսկ ուսուցիչները ոչ ավելի, քան 20%-ը: Այս դեպքում բարձրանում է աշակերտների ներգրավվածության աստիճանը, նրանք դառնում են ավելի ինքնուրույն և ինքնավստահ: (McNamara,1999, p. 31): Հմուտ տարբերակումը բխում է ուսումնառության կատարելագործման համար անհրաժեշտ գործողությունների հավաստի հայտորոշումից, այդ իսկ պատճառով տարբերակումը և գնահատումը դիտարկվում են որպես փոխկապակցված զուգադիր երևույթներ: Երեխայի ուսումնառության հանգամանալից պատկերը ստանալու լավագույն եղանակը ձևավորող գնահատումն է : Գնահատումն օգնում է ուսուցչին հասկանալու, թե ուսումնառության որ կետում է գտնվում աշակերտը տվյալ պահին և որոշելու հետագա քայլերը. ինչպիսի՞ փորձառությունը, օժանդակությունը կամ մարտահրավերը կօգնեն նրանց առաջընթաց գրանցել: Գնահատումից ստացած տեղեկատվությունը գործողությունների հիմք է հանդիսանում, այդ իսկ պատճառով տարբերակումը և գնահատումը խիստ փոխկապակցված գործընթացներ են: Տարբերակումը ռազմավարությունների համակարգ է, որի նպատակն է համոզվել, որ յուրաքանչյուր աշակերտ դասից հեռանում է ուսումնառության մեջ մի քայլ առաջ կատարած. գիտի ավելին, ավելի խորն է ընկալում, վստահաբար կիրառում է հմտությունները և ուզում է սովորել ավելին: Տարբերակում՝ ըստ առաջադրանքի. Աշակերտներն օգտագործում են նույն ռեսուրսները, սակայն կատարում են տարբեր առաջադրանքներ՝

• Տարբերակում՝ ըստ ռեսուրսի

Աշակերտները կատարում են նման առաջադրանքներ, սակայն օգտագործում են տարբեր ռեսուրսներ

• Տարբերակում ՝ըստ ժամանակի

Տրվում են նույն առաջադրանքները, սակայն առաջադրանքի կատարման համար տարբեր ժամանակահատվածներ: Ցանկացած հաջորդող առաջադրանք պետք է լինի նպատակային և գրավիչ, որպեսզի խթանի աշխատանքի արագ ավարտը:

• Տարբերակում՝ ըստ օժանդակության

Աշակերտներ առաջադրանքները սկսելու համար օգնության կարիք կունենան դասի սկզբում, մյուսները՝ ժամանակ առ ժամանակ, իսկ որոշներն էլ ամբողջ դասի ընթացքում:

• Տարբերակում՝ ըստ արդյունքի

Տարբերակված մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի:

Դրական կողմեր

- Ներգրավված են բոլորը (հատկապես թույլ աշակերտներին)
- Բարձր մակարդակով աշակերտը բարդ բաների վրա կաշխատի
- Ինքնագնահատում
- Ընկերոջը օգնելու ունակությունների ձևավորումներ
- Ինքնադրսևորման հնարավորություն
- Մոտիվացիայի բարձրացում
- Կարողությունների դրսևորում
- Յուրաքանչյուրը սովորում/աշխատում է ինքնուրույն
- Ուսուցիչը հնարավորություն է ստանում օգնել թույլ սովորողին, ուշադրությունու դարձնել ուժեղին
- Առաջանում է հնարավորություն ավելի արդյունավետ աշխատել թույլ սովորողների հետ
- Ուժեղ աշակերտները հնարավորություն են ստանում արագ առաջ շարժվել և խորացնել գիտելիքը
- Ուժեղ սովորողները հաստատակամ են դառնում իրենց ունակությունների մեջ, թույլ սովորողները հնարավորություն են ստանում ուսումնական հաջողություն գրանցել, ձերբազատվել թերարժեքության բարդույթից
- Համասեռ խմբերում դյուրին է դառնում սովորելը

Բացասական կողմեր

- Ժամանակի սղությունը
- Ուսուցչի համար հավելյալ աշխատանք/ժամանակատար է
- Առաջադրանքների մակարդակի սահմանափակում
- Դժվար է համապատասխան առաջադրանքներ կազմել
- Երեխաներին ըստ մակարդակի խմբավորելը հումանիստական չէ
- Թույլ սովորողների խմբերում աշխատելն ընկալվում է որպես արժանիքների նվազեցում
- Հայտորոշման ոչ կատարյալ լինելը բերում է նրան, որ երբեմն ոչ ստանդարտ մտածողությամբ սովորողները հայտնվում են թույլերի խմբում
- Իջնում է մոտիվացիայի մակարդակը թույլերի մոտ
- Խմբերի բաժանելը խախտում է դասարանի ամբողջականությունը

Հետազոտության ընթացք

Հետազոտության ընթացքում ընտրվել են որպես թիրախային խումբ 11-րդ հումանիտար հոսքի դասարանի աշակերտները :Աշակերտները արդեն ծանոթ են ուսումնասիրվող նյութի հիմնական բովանդակությանը ,իսկ այս դասընթացի շրջանակներում պետք է խորացնեն գիտելիքները. կարողանան վերլուծել, համեմատել համադրել երևույթները, սահմանել և մեկնաբանել , ինչպես նաև կատարել տարբեր բարդության հաշվարկներ:
Հետազոտվող խնդրի առումով պատկերը ներկայացնելու համար հանձնարարվել են տարբերակված ռազմավարության տարբեր մակարդակի հմտություններ պահանջող առաջադրանքներ՝ մշակված տարբերակների միջոցով:
Համագործակցային ուսուցում կազմակերպելու նպատակով կազմվել են երեք հենակետային տարասեռ փոքր խմբեր, որտեղ ընդգրկվել են ուսումնառության արդյունավետության տարբեր արդյունքներ ունեցող չորս աշակերտներ : Տվյալ հետազոտության համատեքստում խմբերի ձևավորման այսպիսի սկզբունքը նպատակահարմար է այնքանով, որ խմբերում ուժերի հավասարաչափ բաշխման դեպքում աշակերտների փոխադարձ ուսուցման համար պայմաններն առավել նպաստավոր են, ավելի հեշտ է վերահսկել խմբերի աշխատանքը, քանի որ յուրաքանչյուր խմբում ուսումնառության արդյունավետության առավել բարձր առաջադիմության արդյունքներ ունեցող աշակերտները կարող են ուսուցչին օգնողի դերում հանդես գալ և որ պակաս կարևոր չէ, սոցիալական տարբեր խմբերի աշակերտները, տղաներն ու աղջիկները միասին կաշխատեն:Ելնելով հետազոության խնդրից և նպատակ ունենալով ունենալ տարբերակման միջոցով ուսուցման խթանումը, մշակվել են Բլումի տաքսոնոմիայի տարբեր մակարդակի գիտելիքի ուսուցման և տարբեր հմտություններ զարգացնող դասարանային խմբային առաջադրանքներ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Որպես հետազոտության թեմա՝ ընտրվել է տարբերակման ռազմավարության դերը ուսուցման արդյունավետության բարձրացման գործընթացում:Հետազոտության համար ընտրված է ավագ դպրոցի 11-րդ դասարանի հումանիտար հոսքը: Այս հոսքում խորացված անցնում են հումանիտար առարկաներ, իսկ ֆիզիկան ուսումնասիրում են շաբաթական երկու դասաժամ:Համապատասխան չափորոշչային պահանջների նրանք առարկան պետք է ուսումնասիրեն ոչ խորությամբ: Քանի որ ֆիզիկան այդ հոսքում ոչ խորացված առարկա է, շատերի մոտ այն կարծիքն է, որ այն կարևոր չէ, և կարելի է մատների արանքով նայել, դասերին ուշադիր չլինել, տնային աշխատանք չկատարել կամ թերի կատարել: Ներգրավածությունը նրանց մոտ խնդիր է, և այն լուծելու համար նպատակահարմար է տարբերակված ուսուցման կիրառությունը դասապրոցեսին, քանի որ տարբերակված ուսուցումը ապահովում է բոլոր աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին, բարձրացնում է մոտիվացիայի մակարդակը : Միևնույն ժամանակ նաև ուսուցչին է տալիս հնարավորություն օգտագործելու յուրաքանչյուր աշակերտի կարողություններն ու հնարավորությունները: Դասի ընթացքում, նյութի ներկայացման ընթացքում, քննարկվելու և արծարծվելու են այնպիսի հարցեր, որոնք ուղղակի և անուղղակի կերպով տանում են նրան , որպեսզի աշակերտը իր արդյունքները բարելավվի, ավելի ուշադիր կլինի դասին, նշումներ կանի տետրում, կկատարի տնային հանձնարարությունը: Եվ որպեսզի արագ պատրաստվեն, սովորողները պետք է օգնեն իրար , իսկ սխալ պատասխանի դեպքում դասընկերոջ կողմից հետադարձ կապ ստանալը համարվում է ներգրավվածության աճ: Որպես ներգրավածության աճի անմիջական վկայություն կծառայեն՝ նրանց բարձրացրած ձեռքերը, տրված հարցերի քանակը և որակը, աշակերտների նոթագրումները, ըստ ցանկության կատարած տնային հանձնարարությունները:Որպես ձևավորող գնահատման արդյունքներ՝ կվերցնեմ այդ դասերի ընթացքում յուրաքանչյուր սովորողի վերլուծությունները հավաքելով և վերլուծելով՝ կուսումնասիրեմ՝ արդյոք աճ կա, թե ոչ

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակն է կիրառելով տարբերակված ուսուցումը ներկայացնել դասավանդման տարբերակման պլանավորումը՝ ըստ սովորողների կարիքների եւ ուսումնական գործընթացի առանցքային բաղադրիչների,ծանոթացնել տարբերակված ուսումնառության մեթոդներին եւ բոլոր սովորողներին ներգրավելու ռազմավարություններին: Հայտնի է, որ նոր բան սովորելիս մարդը թույլ է տալիս սխալներ, ուսուցչի խնդիրը կայանում է նրանում, որ սովորողը ուսումնական պրոցեսում կատարված սխալները ուսումնասիրի, վերլուծի և հետագայում մասնագիտական գործունեության ժամանակ թույլ չտա դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ գլխավոր միտքը, կարծիքները լսել և առաջարկել ուսումնասիրել բուն դասանյութն ու ընդհանրություններ կամ տարբերություններ գտնել գուշակածի ու դասանյութի միջև: Միանգամայն ակնհայտ է, որ ցանկացած դասի ընթացքում աշակերտների ուսումնառության վրա ազդում է նախորդ դասերին սովորածը: Ազդում է նաև այն, թե նրանց ինչպես են դասավանդել և թե ինչպես են նրանք արձագանքել դրան: Ակներև է, որ տարբերակումը՝ որպես դասապլանավորման մաս, ներառում է դասարանում անհատների և խմբերի որոշակի կարիքները հոգալու համար ուսուցիչների կողմից ձեռնարկած մանրակրկիտ քայլեր: Հետևաբար,դասապլանավորման փուլում միշտ պետք է հաշվի առնել անհատականացված կրթական ծրագրեր ունեցող աշակերտների պահանջները: Տարբերակված ուսուցման ներդրման ժամանակ բացահայտել են, որ շատ աշակերտներ, որոնք այս կամ այն առարկայից ունեցել են խոր ընդունակություններ, չեն ցանկացել ընտրել առավելագույն մակարդակը: Այդպիսի պատկեր է նկատվել նաև մնացած առարկաների նկատմամբ: Նշանակում է, որ երբեմն աշակերտը մի առարկայից ընտրում է նվազագույն մակարդակը, նպատակ չի հետապնդում, որպեսզի մյուս առարկայից ընտրի առավելագույնը: Այդպիսի աշակերտի հետաքրքրությունները այլ են. սիրում է զբաղվել սպորտով, արվեստով, շփվել

ընկերների հետ, այս մեթոդը թույլ չի տալիս աշակերտին զգալ թույլ ուժեղ աշակերտների մեջ:

Բոլորը հավասար են այստեղ, բոլորը զբաղված են, բոլորն են պատկերացնում դասապրոցեսում իրականացվող դասի բովանդակությունը: : Օրինակ՝ որևէ թեմա հետազոտելու համար բոլոր աշակերտներն օգտագործում են համացանցը, սակայն բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները մշակում են զեկույց, որտեղ պահանջվում է համադրել և գնահատել սեփական բացահայտումները, իսկ ոչ այնքան բարձր առաջադիմություն և հատուկ կրթական կարիքներ ունեցող աշակերտները հետևում են սահմանված ուղենիշներին և գտնում կոնկրետ հարցերի պատասխանները:
Հատուկ կրթական կարիքներ ունեցող աշակերտները հաճախ ավելի հեշտ են կատարում առաջադրանքները, երբ մեկ մեծ քայլ անելու փոխարեն նրանք առաջադրանքը վերածում են փոքր քայլերի հաջորդականության: Տարբերակման միջոցով է ուսուցիչը հնարավորություն տալիս յուրաքանչյուր աշակերտին իրացնել իր ամբողջ ներուժը: Այն ենթադրում է, որ ուսուցիչը պատկերացնում է անհատների ուսումնառության ոճի նախապատվությունները, նրանց կարիքներն ու դժվարությունները. բացահայտվում են ուսումնառության այն խոչընդոտները, որոնց բախվում են որոշ երեխաներ, և միջոցներ են ձեռնարկվում դրանք վերացնելու կամ գոնե նվազեցնելու ուղղությամբ: Բոլոր աշակերտները յուրօրինակ են, և հեշտությամբ կարելի է բացահայտել ցանկացած երկու աշակերտների միջև տարբերությունները: Այդուհանդերձ, աշակերտների միջև գոյություն ունեցող ոչ բոլոր տարբերություններն են առնչվում նրանց աշակերտական կյանքին,անհրաժեշտ է բնորոշել այն տարբերությունները, որոնք կարող են ազդել աշակերտների՝ ուսումնառությանն ուղղված պլանավորման վրա: Այսպիսով տարբերակված ուսուցումը պետք է պլանավորել ըստ սովորողների կրթական կարիքների, ապահովելով յուրաքանչյուր սովորողի ներգրավվածությունը:

Եզրակացություն

Այս գլխում ներկայացվել է հակիրճ ներածական տեղեկատվություն այն բանի շուրջ, թե ինչպես են անհատների միջև տարբերություններն ազդում նրանց ուսումնառության վրա, ինչպես նաև որոշ մոտեցումներ, որոնք ի պատասխան այս տաբերությունների՝ որդեգրվում են անհատ ուսուցիչների կամ դպրոցների կողմից: Անհատական տարբերություններին արձագանքելն, ըստ երևույթին, ուսուցչական դերի: Յուրաքանչյուր դասին ունեցած փոքրիկ հաջողությունները կհանգեցեն նրան, որ սովորողը կսկսի
հավատալ առարկան յուրացնելու իր ուժերին: Երբ հավատում ես, որ կարող ես, եր-բեմն անհնարինը դառնում է հնարավոր,, (Ջեֆ Փեթթի գլուխ 5, ,,Մոտիվացիա,, էջ 6):

Հետազոտության արդյունքում հասկացա , որ ապրելով և աշխատելով 21-րդ դարում, որը բարձր տեխնոլոգիաների դար է, պետք է ժամանակին համահունչ քայլել: Լավ ուսուցիչը միշտ պետք է նոր մոտեցումներ ցուցաբերի դասավանդմանը կիրառի այնպիսի մեթոդներ և ակտիվ գործիքներ, որոնք կմեծացնեն ներգրավվածությունը, կմոտիվացնեն սովորողներին, դասը կդարձնեն առավել հետաքրքիր և արդյունավետ: Տարբերակումը ստիպում է ուսուցչին ուսումնական ծրագրի կատարողականի մասին մտածելուց իր մտածողությունը տեղափոխել սովորողների անհատական կրթական կարիքները բավարարելուն: Աշակերտները լավ են սովորում, երբ ուսուցիչները կարողանում են համադրել նրանց պատրաստվածության մակարդակների, հետաքրքրությունների տարբերությունները: Տարբերակման ռազմավարության կիրառման հիմնական նպատակն է՝ օգտագործել յուրաքանչյուր աշակերտի սովորելու ունակությունները(Tomlinson) :Ուսուցիչն իր աշխատանքը պետք է այնպես կազմակերպի, որ աշակերտի համար հետաքրքիր լինի ինչպես բուն դասը, այնպես էլ դասից հետո տրված տնային աշխատանքները, որոնք պետք է լինեն հետաքրքիր, գրավող, ժամանակակից ամենաբարդ ոլորտներից է և լուրջ վերաբերմունքի պարագայում մարտահրավերների տեղիք է տալու ողջ կարիերայի ընթացքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Алехин А.Ю. Общие методы обучения в школе. — К.: Радянська школа, 1983.
2. Давыдов В. В. Теория развивающего обучения. — М.: ИНТОР, 1996.
3. Краевский В. В., Хуторской А. В. Основы обучения: Дидактика и методика. Учеб. пособие для студ. высш. учеб. заведений. — М.: Издательский центр «Академия», 2007.
4. Ляудис В. Я. Методика преподавания психологии: Учебное пособие. 2000.
5. Михайличенко О.В. Методика преподавания общественных дисциплин в высшей школе: учебное пособие. – 2009.
6. Պետրոսյան Հ.Հ. Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ Երևան ՝Ան-Զոն՝ 2008թ.